

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում գրավի իրավունքին վերաբերող դրույթների մասին

1. Ներածություն

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ընդունված 1998թ.) 15-րդ գլուխը կարգավորում է գրավի իրավունքի հետ կապված հարաբերությունները: Նշված դրույթներն արդեն շուրջ 16 տարի, ընդհանուր առմամբ, արդյունավետ կարգավորել են գույքային այդ հարաբերությունները, առանց մեծաքանակ փոփոխություններ կրելով (մինչ օրս կատարվել են թվով 21 փոփոխություններ): Սակայն նշված նորմերի գիտական ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկայի հետ ծանոթացումը թույլ են տալիս կարծելու, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլուխը որոշակի փոփոխությունների կարիք ունի:

2. Առկա խնդիրները և փոփոխությունների անհրաժեշտությունը

Գրավի իրավունք գլխում առկա հիմնական խնդիրները հետևյալն են՝ գրավի իրավունքի կարգավիճակը որպես *Ius in re* է՝ գույքային իրավունք, հստակեցված չէ, բացակայում են բարեխիղճ գրավառուի իրավունքների պաշտպանության մեխանիզմները, գրավի իրավունքի հետ կապված իրավահարաբերությունների բոլոր կողմերի՝ գրավատուի, գրավառուի, պարտապանի և երրորդ անձանց (օրինակ՝ գրավ դրված գույքը բարեխիղճ ձեռքբերող) իրավունքների պաշտպանության մեխանիզմները թերություններ ունեն, առկա են անորոշ դրույթներ, որոնք գործնականում հնարավորություն չեն տալիս լիարժեք օգտագործել այդ գույքային իրավունքի բոլոր հնարավորությունները: Հիմնական հայեցակարգային առաջարկությունները ներկայացվում են ստորև.

1. ՀՀ քաղ. օր.-ի 226-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է գրավի իրավունքի հասկացությունը՝ չկիրառելով այդ հասկացության կարևորագույն հատկանիշը՝

գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունքը: Թեև նշված բացը լրացվում է նույն հոդվածի 3-րդ մասով, սակայն 1-ին մասում նշված սահմանումը դրանով լիարժեք չի դառնում: Առաջարկում ենք 226-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխել, որով կտրվի «գրավի իրավունք» հասկացության ամբողջական սահմանում:

2. Թեև Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասը «գրավի իրավունք» հասկացությունը բնորոշում է որպես գույքային իրավունք, նույն հոդվածի 2-րդ մասը նույն հասկացությունն արդեն դիտարկում է որպես պարտավորություն: Անշուշտ՝ գրավի իրավունքն ակցետը (երկրորդական, լրացուցիչ, բխող, ծառայող և այլն) է պարտավորությանը, սակայն դրանով իսկ գրավի իրավունքը չի դառնում պարտավորություն: Գրավի իրավունքը *Ius in re* է՝ գույքային իրավունք, և Օրենսգրքում պետք է գրավի իրավունքի այդ կարգավիճակը հստակ ընդգծվի:
3. Օրենսգրքի 15-րդ գլխի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ գրավի իրավունքով չի կարող ապահովվել ապագայում ծագելիք պարտավորություն: Բացի այդ, անորոշ է, թե գրավի իրավունքը կարող է ապահովել պայմանական պարտավորություն: Նշված պարտավորությունների ապահովումը գրավի իրավունքով տարածված պրակտիկա է զարգացած շուկայական հարաբերություններ ունեցող երկրներում՝ այդ թվում կոնտինենտալ համակարգին հարող երկրներում: Կարծում ենք, որ Օրենսգրքում այդ մասին էկսպլիսիտ կերպով նշումը կարգավորումը կդարձնի ավելի կատարյալ:
4. Կոնտինենտալ համակարգի քաղաքացիական օրենսգրքերում տարածված պրակտիկա է նշելը, որ պայմանագրով կարող է սահմանվել պարտավորության առավելագույն սահմանաչափ, որի կատարումն ապահովվում է գրավով: Կարծում ենք, մեր օրենսգրքում նման դրույթի առկայությունը տվյալ հարցում կարող է հստակություն մտցնել:
5. Օրենսգիրքը չի նախատեսում նորմ, որը կպաշտպանի բարեխիղճ գրավատուին: Առաջարկում ենք, սահմանել դրույթ, համաձայն որի այն դեպքում, երբ գույքը գրավադրում է նման իրավասություն չունեցող անձ և գրավատուն այդ մասին

չգիտի, ապա գրավի իրավունքը համարվում է օրինական (իրավաբանական ֆիկցիա): Բհարկե, Օրենսգրքում նշված կանոնից կարող է արվել բացառություններ:

6. Օրենսգրքի 228-րդ հոդվածը որպես գույքի գրավատու դիտարկում է միայն գույքի սեփականատիրոջը: Միևնույն ժամանակ, կոնտինենտալ համակարգին հարող շատ երկրներում գրավատու կարող է լինել նաև գրավառուն՝ գույքը բազմակի անգամ գրավադրելիս: Առաջարկում ենք քննարկել Օրենսգրքում նման փոփոխություն կատարելու նպատակահարմարության հարցը:
7. Թեև Օրենսգիրքը տալիս է հնարավորություն, որպեսզի գրավատու հանդիսանա նաև պարտապան չհանդիսացող երրորդ անձ, սակայն Օրենսգիրքը անհրաժեշտ հնարավորություն չի ստեղծել այդ երրորդ անձի համար պաշտպանելու իր իրավունքները: Կարծում ենք, որ 228-րդ հոդվածում պետք է սահմանվի դրույթ, համաձայն որի երրորդ անձ գրավատուն պարտապանին հավասար պետք է ունենա պարտատիրոջն առարկություններ ներկայացնելու հնարավորություն:
8. Առաջարկում ենք Օրենսգրքի 230-րդ հոդվածում սահմանել, որ գրավի իրավունքը տարածվում է նաև գրավի առարկայի պատկանելիք գույքի վրա:
9. Օրենսգրքի 234-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գրավի պայմանագրի էական պայմանները՝ կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը: Նախևառաջ, առաջարկում ենք էական պայմանների շրջանակից հանել բնակության վայրեր (գտնվելու վայրեր) պայմանը: Բացի այդ, առաջարկում ենք, որ Օրենսգրքում հնարավորություն ստեղծվի, որպեսզի գրավով ապահովված պարտավորության էության, չափի ու կատարման ժամկետի նշման փոխարեն հղում կատարվի ապահովվող պարտավորության հիմք հանդիսացող պայմանագրի վրա:
10. Առաջարկում ենք Օրենսգրքի 236-րդ հոդվածում (հաջորդող գրավ) սահմանել, որ բոլոր այն դեպքերում, երբ գրավի առարկան տրվում է գրավառուին, հաջորդող

գրավի դեպքում, այն մնում է այն գրավառուի մոտ, որի իրավունքը ժամանակային առումով նախորդում է մյուս գրավառուների իրավունքներին:

11. Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հաջորդող գրավը թույլատրվում է, եթե այն արգելված չէ դրան նախորդած գրավի պայմանագրերով: Կարծում ենք, որ նշված կարգավորումը կարող է անհամաչափորեն սահմանափակել գրավատուի իրավունքը: Այդ իսկ պատճառով շատ երկրներում նման կարգավորումից հրաժարվել են: Առաջարկում ենք Օրենսգրքից հանել նշված դրույթը:
12. Օրենսգրքում անհրաժեշտություն կա մանրամասն կարգավորել գրավատու, նախորդող և հաջորդող գրավառու և պարտապաններ հարաբերությունները: Օրենսգրքում պարզ չէ, թե ինչ է լինում այն դեպքում, երբ հաջորդող գրավառուն որոշում է բռնագանձում տարածել գրավ դրված գույքի վրա:
13. Օրենսգրքի 236-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Նախևառաջ, անհասկանալի է, թե ինչու պետք է օրենքով այլ բան նախատեսվի: Բացի այդ, պարզ չէ, թե այն դեպքում, երբ նախորդող գրավով ապահովված պարտատերը հրաժարվում է բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա, արդյոք հաջորդող գրավի իրավունք ունեցող անձը բռնագանձում տարածելու իրավունք ունի, թե՛ ոչ: Այդ իսկ պատճառով առաջարկում են այդ նշված հոդվածում ավելացնել դրույթ, համաձայն որի հաջորդող գրավի ժամանակ գրավի առարկան իրացնելու իրավունք պետք է ունենա այն գրավառուն, ում գրավի իրավունքը նախորդում է մյուս գրավառուների իրավունքները: Եթե նշված անձը հրաժարվում է իր իրավունքից, հաջորդող գրավատուները գրավի առարկայի իրացման իրավունք են ստանում:
14. Օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գրավառուի կողմից նույն հոդվածի 1-ին կետում նշված պարտականությունները կոպիտ խախտելու դեպքում, որը գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքի սպառնալիք է

ստեղծում, գրավատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ դադարեցնելու գրավը: Գտնում ենք, նշված կարգավորումը ուղղված չէ բուն խնդրի լուծմանը՝ գրավադրված գույքը հավուր պատշաճի պահպանմանը: Գործնականում այն կարող է անհամաչափ սահմանափակել պարտատիրոջ իրավունքները և հանգեցնել ծախսատար դատական վիճաբանությունների: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք նշված մասի փոխարեն սահմանել դրույթ, համաձայն որի այն դեպքում, երբ գրավատուն չի կատարում գույքը պատշաճ պահպանելու պարտականությունը, գրավատուի պահանջով գրավադրված գույքը կարող է փոխանցվել երրորդ անձի պահպանությանը:

15. Օրենսգրքի 241-րդ հոդվածը սահմանում է դրույթներ, որոնք ուղղված են գրավի առարկայի նկատմամբ գրավատուի իրավունքների պաշտպանությանը: Միջազգային պրակտիկայում ընդունված կանոն է, որ գրավատուն պետք է օգտվի գրավադրված գույքի նկատմամբ իր իրավունքների պաշտպանության նույն ծավալից, ինչ ունի սեփականատերը: Սակայն Օրենսգրքի 241-րդ հոդվածը սահմանում է միայն գրավատուի՝ գրավադրված գույքի տիրապետման և օգտագործման իրավունքների պաշտպանության մեխանիզմներ: Միչդեռ գրավատուն պետք է օգտվի իր գույքային իրավունքի պաշտպանության ավելի լայն շրջանակից: Որպես օրինակ կարելի է բերել գրավատուի իրավունքը պահանջելու գրավի առարկայի վրա դրված արգելանքի վերացում: Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ անբարեխիղճ գրավատուները, որպեսզի խուսափեն գրավի առարկայի բռնագանձումից, իրենց դեմ «բեմականացնում» են կեղծ դատական գործեր, որոնց հայցապահանջների ապահովման համար արգելադրվում են գրավադրված գույքերը: Արդյունքում գրավատուն զրկվում է իր իրավունքների իրացման, ինչպես նաև դրանց պաշտպանության հնարավորությունից:

16. Օրենսգրքի 247-րդ հոդվածը սահմանում է գրավի դադարման հիմքերը: Քանի որ նախատեսվում է Օրենսգրքում կատարել փոփոխություններ, որոնք համապարփակ կպաշտպանեն բարեխիղճ ձեռքբերողի իրավունքները,

անհրաժեշտ է նաև գրավի դադարման հիմքերում ավելացնել նաև այն դեպքը, երբ գրավադրված գույքը հատուցման դիմաց ձեռք է բերվել երրորդ անձի կողմից, ով չգիտեր և չէր կարող իմանալ գրավի գոյության մասին:

17. Օրենսգրքի 247-րդ հոդվածը սահմանում է գրավի դադարման հիմքերը: Ըստ նշված հոդվածի՝ գրավի դադարման հիմք է հանդիսանում նաև գրավ դրված գույքը Օրենսգրքով սահմանված կարգով իրացվելը (վաճառվելը): Նշվածը, անկասկած, վերաբերում է Օրենսգրքի 248-250-րդ հոդվածներով սահմանված կարգով գույքի բռնագանձմանը և վաճառքին: Սակայն Օրենսգրքի 238-րդ հոդվածը նույնպես նախատեսում է գրավադրված գույքի վիրացման (վաճառքի) հնարավորություն, որի դեպքում գրավի իրավունքը չի դադարում: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք 247-րդ հոդվածում կատարել հստակեցում:

18. Օրենսգրքի 249-րդ հոդվածը սահմանում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը, համաձայն որի գրավառուն իրավունք ունի որպես բռնագանձման և իրացման եղանակ ընտրել նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելը: Նշենք, որ նման հնարավորությունը շատ երկրների քաղաքացիական օրենսգրքերով ուղղակիորեն արգելված է: Նման կարգավորում առաջ է բերում բազմաթիվ խնդիրներ՝ շահերի բախում, արդար գնի որոշման դժվարություն, անվստահություն, երկարատև դատական վեճեր և այլն: Կարծում ենք, որ գրավադրված գույքը գրավառուի կողմից իրացվելու դեպքում իրացումը պետք է կատարվի բացառապես աճուրդի միջոցով (բացառությամբ առանձին դեպքերի, օրինակ՝ շուտ փչացող առարկաներ, գնանշում ունեցող գույք և այլն): Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք համապատասխանաբար փոփոխել Օրենսգրքի:

19. Օրենսգրքի 249-րդ հոդվածը սահմանում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը, իսկ 249¹-րդ հոդվածը՝ դատական կարգով բռնագանձում տարածելու կարգը: Ընդ որում, 249-րդ հոդվածի

1-ին մասից բխում է, որ առանց դատարան դիմելու կարգը կիրառվում է միայն կողմերի համաձայնության առկայության դեպքում: Այսինքն՝ Օրենսգիրքը լռելյան նախատեսում է գրավի իրացման բարդեցված ընթացակարգ՝ դատական կարգով: Գտնում ենք, որ արդարեցված չէ նման մոտեցումը: Ստացվում է այնպես, որ գրավի իրացումը դառնում է թանկ գործընթաց, որի իրականացման համար ներգրավվում են դատարանները, իսկ կողմերը կրում են դատական ծախսեր: Առաջարկում ենք Օրենսգրքից ընդհանրապես հանել 249¹-րդ հոդվածը և թողնել միայն գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը: Ընդ որում, այդ կարգով գրավի առարկան իրացվելիս գրավատուի անհամաձայնության դեպքում, վերջինս պատշաճ ծանուցվելուց հետո կունենա հնարավորություն վիճարկելու գրավի առարկայի իրացումը դատական կարգով, որի ժամանակ դատարանը որպես հայցի ապահովում կարող է կասեցնել բռնագանձման գործընթացը:

20. Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարաբերությունը առանց դատարան դիմելու գրավի առարկան բռնագանձելիս գրավատուն պարտավոր է ծանուցել գրավատուին և միայն երկու ամիս հետո գույքի վրա բռնագանձում տարածելու իրավունք ձեռք բերել: Առաջարկում ենք քննարկել նշված երկու ամիս ժամկետի փոխարեն ավելի կարճ ժամկետ սահմանելու նպատակահարմարության հարցը: Գտնում ենք, որ արդարացված չէ ստիպել պարտատիրոջը, ում իրավունքները խախտվել են, սպասել ևս երկու ամիս, որպեսզի վերջինս ունենա հնարավորություն վերականգնելու իր խախտված իրավունքները:

21. Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարաբերությունը սահմանում է, որ գրավի առարկան առանց դատարան դիմելու կարող է բռնագանձվել և իրացվել միայն շուկայում գործող ողջամիտ գնով: Կարծում ենք, որ նշված կարգավորումը գուրկ է իրավական որոշակիությունից, ինչի արդյունքում կարող է խախտել իրավահարաբերությունների կայունությունը: Հարց է առաջանում, թե ով պետք է որոշի շուկայում գործող ողջամիտ գինը: Քանի որ 13-կետում առաջարկել եմ

նախատեսել գույքի իրացում միայն աճուրդով, գտնում եմ, որ շուկայում գործող ողջամիտ գնի վերաբերյալ դրույթը պետք է հանվի Օրենսգրքից: Այդ դեպքում օրենքով սահմանված կարգով կազմակերպված աճուրդում էլ կորոշվի գույքի գինը:

22. Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքից այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին: Առաջարկում ենք նշված դրույթը լրացնել կարգավորումով, համաձայն որի գրավատուի մնացյալ գումարի ստանալուց հրաժարվելու մասին համաձայնությունն առաջինչ է:
23. Օրենսգրքի 256-րդ հոդվածը կարգավորում է իրավունքի գրավի հետ կապված առանձնահատուկ հարաբերությունները: Ընդ որում, 2-րդ մասը խոսում է ժամկետով տրված իրավունքի գրավի մասին՝ նշելով, որ այն կարող է լինել միայն մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Սակայն Օրենսգիրքը չի մանրամասնում, թե ինչ է լինում այդ դեպքում, երբ ժամկետով տրված պահահանջի իրավունքը ժամկետից շուտ է կատարվում: Տվյալ իրավիճակների համար առաջարկում ենք, որպեսզի Օրենսգրքում սահմանվի դրույթ, համաձայն որի պարտավորությունը ժամկետից շուտ կատարվելու դեպքում կատարումը դառնում է գրավի առարկա:
24. Գրավի իրավունք գլխում անհրաժեշտ է կատարել նաև բազմաթիվ խմբագրական փոփոխություններ:

Առաջարկվող կարգավորման արդյունքում Քաղաքացիական օրենսդրության համակարգում կհստակեցվի գրավի իրավունքի դերը, համապատասխան իրավահարաբերությունների մասնակիցները կստանան իրենց իրավունքների պաշտպանության ավելի գործուն մեխանիզմներ և գրավի իրավունքն ավելի արդյունավետ կկիրառվի շուկայական հարաբերությունների մասնակիցների կողմից: